# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 871-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի ----------------- N-----------Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 871-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ**

**ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում <<Հայաստանի պետական ագրարային համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 15-ի N 1567-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> N 871-Ն որոշումը:
2. Առաջարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը՝ <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղ ընդունված ուսանողների հետագա ուսումնառությունը կազմակերպել <<Շուշիի տեխնոլոգիական համալսարան>> հիմնադրամում:
3. Առաջարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը և <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի ռեկտորին՝ քննարկել մասնաճյուղի ուսանողներին <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի ավարտական փաստաթուղթ շնորհելու հարցը և ստորագրել համապատասխան համագործակցության փաստաթուղթ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: